ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 134-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի դրույթներով, հաշվի առնելով Ապարան համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է.

1. Ապարան համայնքի ավագանու 2023 թվականի նոյեմբերի 17-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին՝

(զեկուցող՝ Ա.Կարապետյան)

2. ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի վարչական տարածքում համայնքային սեփականություն հանդիսացող 02-002-0035-0021 կադաստրային ծածկագրով 0.3052 հա հողամասի սեփականության իրավունքն անհատույց Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու մասին

(զեկուցող՝ Վ.Սուքիասյան)

3. Ապարան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը՝ ներառյալ կառույցներով, աճուրդ վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

4. Ապարան համայնքի վարչական տարածքում պետական բյուջեի միջոցների հաշվին ավտոճանապարհների կառուցապատման տեղական տուրքը զիջելու մասին

(զեկուցող՝ Վ. Սուքիասյան)

Ավագանի՝ (կողմ-11) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Սահակյան Հովհաննես
Մանուկյան Աղաբեկ
Սաֆարյան Սևակ
Կարապետյան Արտյոմ
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա.Գ.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, Հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

ՈՐՈՇՈՒՄ

17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 135-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՊԱՐԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 02-002-0035-0021 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.3052 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Պետական միջոցների հաշվին Ապարան քաղաքի Գ.Նժդեհի 36 հասցեում կառուցված բազմաբնակարան բնակելի շենքի բնակարանների բաշխման և հատկացման գործընթացի կազմակերպման անհրաժեշտությունից ելնելով, շենքի սպասարկման և օգտագործման նպատակով հատկացված և համայնքային սեփականություն հանդիսացող 02-002-0035-0021 կադաստրային ծածկագրով 0,3052 հա հողամասը Հայաստանի Հանրապետությանը փոխանցելու նպատակով, ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերի և 63-րդ հոդվածի 1-ին կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.ՀՀ Արագածոտնի մարզի Ապարան համայնքի Ապարան քաղաքի Գ. Նժդեհի 36 հասցեում, համայնքային սեփականություն հանդիսացող 02-002-0035-0021 կադաստրային ծածկագրով 0,3052 հա՝ նորակառույց բազմաբնակարան բակելի շենքի սպասարկման և օգտագործման համար առանձնացված 0.3052 հա հողամասի սեփականության իրավունքը անհատույց փոխանցել Հայաստանի Հանրապետությանը:

Ավագանի՝ (կողմ-11) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Սահակյան Հովհաննես
Սաֆարյան Սևակ
Կարապետյան Արտյոմ

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա.Գ.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
Ա Պ Ա Ր Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Քի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Ապարան, Մարշալ Բաղրամյան 26, հեռ. (0252)2-43-93
էլ. փոստ՝ aparan.aragatsotn@mta.gov.am, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023 ԹՎԱԿԱՆ N 136-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԿԱՌՈՒՑՑՆԵՐՈՎ, ԱՃՈՒՐԴ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ Հողային օրենսգրքի 68-րդ և 70-րդ հոդվածների դրույթներով, հիմք ընդունելով <<Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով Անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին>> ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 04.06.2020թ N 1023 որոշման պահանջները և ,,ՔԱՂ ՇԻՆ'' ՍՊԸ գնահատման հաշվետվությունների հիման վրա համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարան համայնքի ավագանին որոշում է՝

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի սեփականություն համարվող 0,4518 հա հողամասերը՝ ներառյալ նրանց վրա գտնվող կառուցվածքներով՝ 4 լոտերով՝ աճուրդ վաճառքով օտարել:

2. Հաստատել հողամասերի մեկնարկային գները՝ համաձայն աղյուսակի:

3.Համայնքի ղեկավարին՝ ապահովել աճուրդի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր աճուրդ-վաճառքը պատշաճորեն կազմակերպելու և անցկացնելու համար:

ՀՈՂԱՄԱՍԵՐ՝ ՆԵՐԱՌՎԱԾ ԿԱՌՈՒՑՑՆԵՐՈՎ — Աղյուսակ

Լոտ	Բնակավայր, հասցե	Ծածկագիր	Կառուց-վածքի անվանում	Հողա-մասի ՀԱ	Մեկնարկային արժեքը ՀՀ դրամ		Հողամասի և կառուցվածք ընդհանուր մեկնարկայն արժեքը ՀՀ դրամ	Նպատակային նշանակություն
					Հողամասի	Կառույցի		
1	Գ.Եղիպատրուշ 12-րդ փող 20/16	0001-0043	Սիլոսի հոր-1	0,0950	1.120.000	180.000	1.300.000	Արդ/ընդերք. օգտ. և գյուղ արտադրակ
2	Գ.Եղիպատրուշ 12-րդ փող 20/17	0001-0044	Սիլոսի հոր-2	0,1038	1.250.000	50.000	1.300.000	Արդ/ընդերք. օգտ. և գյուղ արտադրակ
3	Գ.Եղիպատրուշ 12-րդ փող 20/18	0001-0042	Խոտի նավես-1	0,1300	1.650.000	850.000	2.500.000	Արդ/ընդերք. օգտ. և գյուղ արտադրակ
4	Գ.Եղիպատրուշ 12-րդ փող 20/19	0001-0041	Խոտի նավես-2	0,1230	1.550.000	650.000	2.200.000	Արդ/ընդերք. օգտ. և գյուղ արտադրակ

Ավագանի՝ (կողմ-11) (դեմ-0) (ձեռնպահ-0)

Կարապետյան Արկադի
Սեդրակյան Հայկ
Ենոքյան Դավիթ
Խալաթյան Արթուր
Ավդալյան Արարատ
Մակարյան Վահան
Սահակյան Հովհաննես
Մանուկյան Աղաբեկ
Սաֆարյան Սևակ
Կարապետյան Արտյոմ
Կոստանյան Ժորա

Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ա.Գ.Կարապետյան